ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Դարպաս, 3-րդ փող. 5, Հեռ. (0322)6-06-24 ,
darpas.lori@mta.gov.am

N 215
14 սեպտեմբեր 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան
Ձեզ ենք ներկայացնում Դարպաս համայնքի ղեկավարի թիվ 74-ից 76 որոշումները:
Առդիր՝1 ֆայլ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Արմեն Ալոյան**

Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Դ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 74

Ա.Պ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156, 158, 159, 161 հոդվածների, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումով և հաշվի առնելով Ա.Պ. Վարդանյանի դիմումը.
Որոշում եմ.

1.Դարպասի համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Անահիտ Պատվականի Վարդանյանին տրամադրել 2018թ-ի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները ս/թ սեպտեմբերի 11-ից մինչև հոկտեմբերի 15-ը ներառյալ՝ 24 աշխատանքային օր:
2.Անահիտ Պատվականի Վարդանյանին հիմնական արձակուրդային վճարից բացի, վճարել լրացուցիչ միանվագ դրամական պարգևատրում՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:
3.Անահիտ Վարդանյանի արձակուրդում գտնվելու ժամանակ փոխարինող նշանակել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ՝ Արթուր Աբրահամյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 75

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԾՐՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արծրուն Գրիգորյանի 2018 թվականի սեպտեմբերի 11-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19 թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ և 6-րդ կետերով.
Որոշում եմ՝

1.Դարպաս համայնքի 1փող 23 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Արծրուն Գրիգորյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԴՈՆԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 76

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԼԻՍԱ ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ալիսա Միքայելյանի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19 թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ և 6-րդ կետերով.
Որոշում եմ՝

1.Դարպաս համայնքի 5 փողոց 4 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Ալիսա Միքայելյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ